ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР
Հասարակական գիտություններ № 5, 1957 Общественные науки

ԳԻՏԱԿԱՆ ԼՐԱՏՈՒ

ԳԻՏԱԿԱՆ ՍԵՍԻԱ, ՆՎԻՐՎԱԾ ԱՆԴՐԿՈՎԿԱՍՅԱՆ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ՓԻԼԻՍՈՓԱՅԱԿԱՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄՏՔԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆԸ

Այս տարվա փետրվարի 14—16-ին Թբիլիսիում, ՍՄԿՊ կենտկոմին կից Մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի Վրացական ֆիլիալի նիստերի դահլիճում, կայացավ Ադրբեջանական ՍՍՌ և Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիաների փիլիսոփայության սեկտորների և Վրացական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Փիլիսոփայության ինստիտուտի միացյալ գիտական սեսիան, որ նվիրված էր անդրկովկասյան ժողովուրդների փիլիսոփայական և հասարակական-քաղաքական մտքի պատմության մի շարք կարևոր հարցերին: Սեսիայի աշխատանքներին մասնակցում էին նաև ՍՍՌՄ Գիտությունների ակադեմիայի Փիլիսոփայության ինստիտուտի, ինչպես նաև Արխազիայի ու Հարավային Օսեթիայի գիտական հիմնարկների ներկայացուցիչները:

Սովետական Միության ժողովուրդների փիլիսոփայական և հասարակական-քաղաքական մտքի պատմության ուսումնասիրությունը արդեն շատ տարիներ գտնվում է համապատասխան գիտական հիմնարկների ուշադրության կենտրոնում.

Նա իր պատվավոր տեղն է գրավում ինչպես ՍՍՌՄ Գիտությունների ակադեմիայի Փիլիսոփայության ինստիտուտի, այնպես էլ եղբայրական բոլոր ռեսպուբլիկաների Գիտությունների ակադեմիաների փիլիսոփայական հիմնարկների գիտա-հետազոտական աշխատանքների պլաններում: Հեղինակային մի մեծ կոլեկտիվի երկարատև ու արդյունավետ ջանքերի շնորհիվ արդեն հրատարակվել են «ՍՍՌՄ ժողովուրդների փիլիսոփայական և հասարակական-քաղաքական մտքի պատմության ակնարկներ» գրքի 2 հատորները, որոնք ընդգրկում են հնագույն ժամանակներից մինչև 19-րդ դարն ընկած ժամանակաշրջանը:

Ներկայումս տպագրության է պատրաստվում «Ակնարկների» 3-րդ հատորը, որը նվիրված կլինի մարքսիստական փիլիսոփայության տարածման ու զարգացման պատմությանը: «Ակնարկները» կազմելու աշխատանքին զգալի մասնակցություն է ունեցել անդրկովկասյան ռեսպուբլիկաների փիլիսոփայական հիմնարկների գիտական աշխատողների մի մեծ խումբ:

Անդրկովկասի եղբայրական ժողովուրդները, որոնք իրար հետ միացած են դարավոր կապերով, զգալի տեղ են գրավում ինչպես ՍՍՌՄ ժողովուրդների ընդհանուր պատմության, այնպես էլ փիլիսոփայական և հասարակական-քաղաքական մտքի պատմության մեջ: ՍՍՌՄ ժողովուրդների փիլիսոփայական և հասարակական-քաղաքական մտքի հնագույն հիշատակարանները պատկանում են Անդրկովկասի ժողովուրդներին: Այդ փիլիսոփայությունների ուսումնասիրման և հրատարակման գործը գնալով ավելի ու ավելի մեծ թափ է ստանում անդրկովկասյան երեք ռեսպուբլիկաների Գիտությունների ակադեմիաների փիլիսոփայական հիմնարկներում:

Չնայած այս ասպարեզում ձեռք բերված որոշակի հաջողություններին, ՍՍՌՄ ժողովուրդների և մասնավորապես, Անդրկովկասի ժողովուրդների փիլիսոփայական և հասարակական-քաղաքական մտքի պատմության ուսումնասիրման գործում դեռևս կան զգալի թերություններ: Մասնավորապես խոշոր բաց է այն, որ մինչև վերջին ժամանակներս համարյա բացակայում էր այդ աշխատանքների կոորդինացումը ինչպես ողջ Սովետական Միության, այնպես էլ հատկապես անդրկովկասյան ռեսպուբլիկաների գիտական հիմնարկների միջև:

Այդ թերությունների վերացման, մեր գիտության հետագա զարգացման, անդրկովկասյան եղբայրական ռեսպուբլիկաների փիլիսոփայական հիմնարկների մասնագետների ուժերի է՛լ ավելի համախմբման, նրանց աշխատանքների կոորդինացման գործին

զգալիորեն օժանդակեց Բրիլլիսի փետրվարյան գիտական սեսիան, որը տևեց 3 օր և մեծ հետաքրքրություն առաջացրեց Սովետական Վրաստանի մայրաքաղաքի ինտելիգենցիայի մեջ:

Սեսիայում կարդացված գիտական զեկուցումները զգալի արժեք են ներկայացնում անդրկովկասյան ժողովուրդների փիլիսոփայական և հասարակական-քաղաքական մտքի պատմության ուսումնասիրության տեսակետից: Նրանք ընդգրկում են այդ պատմության ամենատարբեր շրջանները, հնագույն ժամանակներից մինչև Անդրկովկասում մարքսիզմի տարածման շրջանը ներառյալ: Առանձնապես մեծ հետաքրքրությամբ լսվեցին Անդրկովկասի ու Մերձավոր Արևելքի ժողովուրդների փիլիսոփայական մտքի պատմության այնպիսի ճանաչված մասնագետների զեկուցումները, ինչպիսիք են ՍՍՌՄ Գիտությունների ակադեմիայի թղթակից-անդամ և Ադրբեջանական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս Ա. Օ. Մակովելսկին, փիլիսոփայական գիտությունների դոկտորներ Շ. Ի. Նուգուբիձեն և Վ. Կ. Զալոյանը: Սեսիայում կարդացված բոլոր զեկուցումները իրենց թեմատիկայով դուրս են գալիս Անդրկովկասի և Մերձավոր Արևելքի ժողովուրդների փիլիսոփայական մտքի պատմության սահմաններից և վերաբերում են նաև համաշխարհային փիլիսոփայական մտքի որոշ հարցերին:

Մեծ հետաքրքրություն առաջացրեց պրոֆ. Ա. Օ. Մակովելսկու զեկուցումը, որը նվիրված էր Մերձավոր ու Միջին Արևելքի հնագույն կուլտուրական հուշարձան Ավեստային: Ցույց տալով, որ Ավեստան ստեղծվել է բազմաթիվ հարյուրամյակների ընթացքում (նախքան մեր թվարկությունը 9-րդ դարից սկսած մինչև Սասանյանների էպոխան ներառյալ), զեկուցողը հանդամանորեն կանգ առավ այն խնդրի վրա, որ Ավեստայի տարբեր մասերի ստեղծման գործում մասնակցություն են ունեցել բազմաթիվ ժողովուրդներ, միդիացիներն ու պարսիկները, ադրբեջանցիներն ու հայերը և որ մի ժամանակ դրա-դաշտը տարածված է եղել հսկայական տերիտորիայի վրա՝ Հնդկաստանից ու Ավղանստանից մինչև Հունաստան և Ադրբեջանից ու Հայաստանից մինչև Բաբելոն, ըստ որում տարբեր վայրերում նա ունեցել է տարբեր բնույթ, իր մեջ ընդգրկելով դանադան ժողովուրդների հնագույն առասպելների, լեգենդների ու էպոսի տարբեր հատվածները: Զեկուցման մեջ հատկապես մատնանշվեցին Ավեստայի սինկրետիզմը և փիլիսոփայական երկու հիմնական իդեաները՝ քննության օրինաչափության իդեան և բնության մեջ ու մարդու կյանքում գոյություն ունեցող հակադրությունների պայքարի իդեան:

Փիլիսոփայության գիտությունների դոկտոր Վ. Կ. Զալոյանի զեկուցումը նվիրված էր վաղ միջնադարի (7-րդ դ.) խոշորագույն հայ բնագետ Անանիա Շիրակացուն, որը քրիստոնեական դոգմատիկայի ու կրոնամոլության ամենամութ շրջանում հայկական իրականության մեջ պաշտպանում ու պրոպագանդում էր անտիկ աշխարհի բնագետների — Արիստոտելոս Սամոսցու, Հիպպարքոսի, Պտղոմեոսի և ուրիշների մաթեմատիկական, աշխարհագրական ու տիեզերագիտական իդեաները, ձգտելով միաժամանակ կատարել հեռու գնացող տեսական ընդհանրացումներ: Մասնավորապես, Շիրակացին գտնում էր, որ թեպետ և աշխարհը, բնությունը աստծու ստեղծածն է, բայց նա ճանաչելի է մարդու կողմից, որի ճանաչողությունը հենվում է ոչ միայն զգայական ընկալումների, այլ նաև պիտակցության, բանականության վրա, որը տալիս է ճանաչողության բարձրագույն աստիճանը: Ելնելով աշխարհի չորս էլեմենտների մասին հայտնի ուսմունքից, Շիրակացին հասավ ամեն ինչի անընդհատ ստեղծման և ոչնչացման և բնության մեջ գոյություն ունեցող հակասությունների պայքարի մտքին: Զեկուցման մեջ համոզիչ կերպով ցույց տրվեց նաև Շիրակացու հսկայական ազդեցությունը հետագա դարերի բնա-փիլիսոփայական մտքի զարգացման վրա:

Մտքերի աշխույժ փոխանակության առիթ ծառայեց պրոֆ. Շ. Ի. Նուգուբիձեի զեկուցումը, որ նվիրված էր հայ-վրացական փիլիսոփայական մտքի փոխհարաբերության մի քանի հարցերին, ու թեև նրա առաջ քաշած որոշ դրույթներ պաշտպանություն չգտան սեսիայի մասնակիցների կողմից, այնուամենայնիվ միահամուռ հավանության արժանացավ այն հիմնական և պիտական կուռ փաստարկումներով ամրապնդված միտքը, որ Հայաստանի ու Վրաստանի եղբայրական ժողովուրդները հնագույն ժամանակներից ի վեր բազմաթիվ թելերով կապված են միմյանց հետ, իրենց սոցիալական, քաղաքական, տնտեսական ու կուլտուրական կյանքի ասպարեզներում և որ մեր երկու ժողովուրդների ոչ մի ասպարեզը, այդ թվում նաև փիլիսոփայական մտքի պատմությունը, չի կարելի ուսումնասիրել միմյանցից մեկուսացած ձևով: Բազմաթիվ պատմական փաստերով զե-

կուցողը ցույց տվեց հայկական ու վրացական փիլիսոփայության պատմության միահյուսումը՝ ինչպես հին ու միջին դարերում, այնպես էլ նոր շրջանում:

Միջնադարյան Ադրբեջանի, Վրաստանի ու Հայաստանի փիլիսոփայական մտքի պատմության հարցերին էին նվիրված փիլիսոփայական գիտությունների դոկտոր Ա. Կ. Զակուևի («Հունական լոգիկայի արաբերեն թարգմանությունը և լոգիկայի զարգացումը Միջին Արևելքում միջին դարերի ընթացքում»), փիլիսոփայական գիտությունների թեկնածու Շ. Վ. Խիդաշելու («Ֆեոդալական Վրաստանում հիմնական աշխարհայացքային ուղղությունների հարցի շուրջը»), փիլիսոփայական գիտությունների թեկնածու Ս. Ս. Արևշատյանի («Տաթևի փիլիսոփայական դպրոցը և Գրիգոր Տաթևացու աշխարհայացքը») և ֆիլոլոգիական գիտությունների թեկնածու Ա. Ա. Սեիդ-Զադեի («Ֆեոդալիզմի էպոխայի հասարակական-քաղաքական և փիլիսոփայական մտքի զարգացման պատմությունից Ադրբեջանում») հետաքրքիր զեկուցումները: Այդ զեկուցումների մեջ վեր հանվեցին անդրկովկասյան եղբայրական երեք ժողովուրդների անցյալի կուլտուրայի անբաժանելի մասը կազմող փիլիսոփայական կուլտուրայի հարուստ և հետաքրքիր շատ դրվագներ:

Սեսիայի աշխատանքներում համեմատաբար փոքր տեղ էին բռնում այն հարցերը, որոնք վերաբերում են անդրկովկասյան ժողովուրդների փիլիսոփայական և հասարակական-քաղաքական մտքի զարգացման նոր և նորագույն շրջանների՝ 19-րդ դարի և մարքսիզմի տարածման դարաշրջանին. այս հանգամանքը գիտական սեսիայի գլալի թերությունն էր: Սեսիայում լսվեցին փիլիսոփայական գիտությունների դոկտոր Հ. Գարրիելյանի զեկուցումը, որ նվիրված էր 19-րդ դարի հայ փիլիսոփայական մտքի պատմության ընութագրմանը, փիլիսոփայական գիտությունների թեկնածու Վ. Ա. Գագոիձեի զեկուցումը՝ «Վրացի 60-ականների մասին», ինչպես նաև փիլիսոփայական գիտությունների թեկնածու Լ. Ա. Աբրահամյանի զեկուցումը, որի թեման էր «Մարքսիզմի տարածումը Հայաստանում» և փիլիսոփայության գիտությունների թեկնածու Օ. Մ. Բոկորաձեի զեկուցումը՝ «19-րդ դարի 80—90-ական թվականներին Վրաստանում մարքսիզմի տարածման պատմության մասին»:

Միացյալ գիտական սեսիայում կարդացված զեկուցումների շուրջը ծավալված մըտքերի փոխանակությանը մասնակցած ընկերները միահամուռ կերպով պաշտպանեցին այն միտքը, որ անհրաժեշտ է առաջիկայում կանոնավոր կերպով հրավիրել նման սեսիաներ, ավելի մեծ ուշադրություն դարձնելով ժամանակակից ու հրատապ խնդիրներին, մասնավորապես դիալեկտիկական ու պատմական մատերիալիզմի և ընագիտության փիլիսոփայական պրոբլեմներին:

Ա. ՈՍԿԱՆՅԱՆ

ՀՆԱԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ 1956 Թ.

Հայաստանի հնագիտական ուսումնասիրությունն ընդգրկում է շատ լայն ժամանակաշրջան՝ սկսած հին և նոր քարե դարից մինչև ուշ միջնադար: Հայաստանի հնագետների հիմնական ուշադրությունը կենտրոնացած է հին և նոր քարե դարերի, բրոնզե և երկաթե դարերի ժամանակաշրջանի, ուրարտական հուշարձաններ Թեյշեբաինիի (Կարմիր բլուր), Երեբունիի (Արին-բերդ), Գառնիի, Դվինի ուսումնասիրության և Հայաստանի տերիտորիայում սփռված վիմագիր արձանագրությունների հավաքման և հրատարակման վրա: 1956 Թ. Հայաստանի հնագիտական ուսումնասիրության պատմության մեջ հանդիսացավ կարևոր հայտնագործումների տարի: Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Պատմության ինստիտուտի ավագ գիտ. աշխատող Ս. Մարգարյանը Աշտարակի, Էջմիածնի և Թալինի շրջաններում պեղել է հնագույն բնակավայրեր, որոնց մի մասը պատկանում է նոր քարե դարին:

Պատմության ինստիտուտի ավագ գիտ. աշխատող Հ. Մարտիրոսյանը շարունակելով բրոնզե և երկաթե դարերի հուշարձանների ուսումնասիրությունը, 1956 Թ. Սպիտակի շրջանում հետազոտել է կիկլոպյան մեծ ամրոցը. սրան կից դամբարանադաշտում սկսած պեղումներով հայտնաբերել է տարբեր դարաշրջանների պատկանող գերեզմանաբլուրներ,